# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ Սյունիքի մարզ ք..Դաստակերտ,

էլ-հասցե՝ dastakert@schools.am

16. սեպտեմբեր.2021թ.

ՀՀ Սյունիքի մարզպետ
Մելիքսեթ Պողոսյանին

Հարգելի պարոն Պողոսյան

Ձեզ է ներկայցվում «Դաստակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 15-ին կայացած թիվ _3_ նիստի արձանագրության քաղվածքը, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին ժամը $13^{00}$ ՀՀ Սյունիքի մարզի «Դաստակերտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին:

Առդիր՝ 2 թերթ:

Խորհրդի նախագահ՝ Ն.Ֆիլոսյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

ՀՀ Սյունիքի մարզի «Դաստակերտիմիջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի 2021 թվականիսեպտեմբեր 15-ին կայացած թիվ 3 նիստը :

Խորհրդի նիստին մասնակցել է 9 անդամ, բացակա էր 1՝ /Այվազյան Ռ./

Լսեցին - Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ» - ի դրույթներով « Դաստակերտիմիջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին հարցը:

(զեկուցող՝ խորհրդի նախագահ Նաիրի Ֆիլոյան)

Ելույթ ունեցան Հ.Մինասյանը և Լ.Օհանյանը

Որոշեցին

1. Դաստակերտիմիջնակարգ դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարել մրցույթ:
2. Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը և մրցույթն անցկացնելու մասին հայտարարությունը՝ **համաձայն ձևի**, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ **2021 թվականի** սեպտեմբեր **16-ին** գրավոր ներկայացնել կրթության պետական կառավարման լիազորված մարմին (այսուհետ նախարարություն) և լիազորված մարմին, որոնք երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ տեղեկատվությունը պետք է հրապարակեն իրենց պաշտոնական ինտերնետային կայքում:
3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել նաև azdarar.am կայքով՝ **2021 թվականի** սեպտեմբեր **16-ին**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N-174-Ն որոշմամբ հաստատված կարգով:
4. Մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման ժամկետ սահմանել **2021 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 15.30-ը**, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Հավակնորդների փաստաթղթերի ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի անդամներ Հարություն Մինասյանի և Լիլիթ Օհանյանի վրա:

5. Մրցույթի անցկացման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ՝ **2021 թվականի սեպտեմբերի 16-ին** պաշտոնական գրությամբ դիմել նախարարություն ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու համար՝ միաժամանակ դրա մասին տեղեկացնելով նաև խորհրդի բոլոր անդամներին, հավակնորդներին, լիազոր մարմնին:

5. Մրցույթն անցկացնել 2021 թվականի **2021 թվականի հոկտեմբերի 22-ին** ժամը **13⁰⁰-ին** «Դաստակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում:

6. Մրցույթն անցկացնել ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման համաձայն:

Խորհրդի նախագահ՝ Նաիրի Ֆիլոյան

Խորհրդի քարտուղար ՝ Կարինե Օհանջանյան

Մրցույթի հայտարարություն Ձև 1

«Դաստակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն «Դաստակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի

(ուսումնական հաստատության անվանումը)

կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Դաստակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ ում

(ուսումնական հաստատության անվանումը)

2021 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 8 -ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9.⁰⁰ -ից մինչև ժամը15.³⁰ -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հոկտեմբերի 22-ին՝ ժամը 13.⁰⁰-ին, Դաստակերտի միջնակարգ դպրոցի շենքում: Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Դաստակերտ, Ավետյան 12:

(ուսումնական հաստատության անվանումը և գտնվելու վայրը)

Տեղեկությունների համար դիմել խորհրդի նախագահ՝ Նաիրի Ֆիլոսյանին( dastakertcity@mail.ru 077090809)

անդամներ. Լիլիթ Օհանյանին(094740967 lohanyan@mail.ru), Հարություն Մինասյանին ( harut.minasyan.68@mail.ru077066470)

(խորհրդի կողմից լիազորված անդամի հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)»: